

### 37(1312)

Եթե հարևանը հարևանին որևէ բանի բաժին է տանում (օրինակ, միրգ, ուտելիք), ապա ամանը դատարկ հետ չեն ուղարկում:

### 38(1313)

Եթե բարեկամները նորապսակներին հյուր են տանում, ապա պետք է նրանց որևէ նվեր տան:

### 39(1314)

Նորածին երեխայի բարձի տակ որևէ մետաղյա իր են դնում (մկրատ, դանակ), որ երեխան չկոխվի:

### 40(1315)

Բողազը որ փրթաթըմ աս, եղանակը վատանում աս (խաչպոտելու դեպքում):

### 41(1316)

Չախ ականջը որ քոր աս կյանի, արև պետք աս անի

### 42(1317)

Ոտի տակը քոր աս կյանի, անձրև դի կյանի:

## Գ. ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

### 43(1318). ԱՅՐՎԱԾԵՒ ԲՈՒԺՈՒՄ

Չա՛, վառածը, որ վառը աս, նրա դժբախտանք անըմ են: Վառածինն էլ երկու դժբախտ աս, ախճիկ ջան: Մինը անըմ են՝ խոզի ոսկուռը վառը են, էրըմ՝ վըրեն անըմ:

Մինն էլ՝ ծըվի տեղնուց աս, հարըմ ենք կովի յեղի հետ՝ կովի անարատ յեղի հետ խառնըմ, քսըմ, սըղանըմ աս, անց աս կենըմ: Չէ՛, հետըմ մընը չի: Անձիջապես պետք աս անես:

Բայց, ախճիկ ջան, ոչ մի պան, ասես մի կոպեկ պան վեր ունի, հախս ուզի, չէ՛: Չա՛, տես խնթրանը:

### 44(1319). ՓԸԹԻՑԱՎ՝

Մի լուգանը ճուր աս ածըմ, փըթիթեն սարըմ: Մի չոփի էլ տընըմ են սարըմ են, պանթընը փըթաթըմ: Պանթընը փըթաթըմ են ընքելը են մի խաչիցը, են մի խաչիցն աս հիվանդութիցը, են մինը պան են անըմ: Ես Սըրվեղն աս<sup>2</sup>, են էլ Սևքարա խաչն աս, են էլ սարի խաչն աս, են էլ Չացուտա՛ խաչն աս, են էլ Յալի<sup>4</sup> խաչն աս: Ետ մի փըթաթըմ են էտ խաչերի անունիցը, փըթաթըմ են, ընքելանը մինը պան աս ըլըմ, են մեկելը պան չի ըլըմ: Փըը, են մի պանթընը հանըմ են փըթիթա հըլլորըմ տանըմ տընըմ էտ խաչերըմը, էտ որը որ պան աս ըլել, որի անունով որ պան աս ըլել, տանըմ են տընըմ խաչըմը, որ «իմ էրեսը քու ոտի տակը, են լավութիցը, են բժշկութիցն արա, որ լավանա հիվանդը»:

Ու մըհել որցակը տանըմ են մատաղ անըմ ու փայ անըմ: Ու տա կոչըմ աս փըթիթա:

### 45(1320). ՎԱՍԻ ԶԱՍԱՐ

Սենելի ոսկուռը էրըմ ենք ու մեկ շան քաքը չորըցնըմ ենք, մուկն էլ էրըմ ենք, էտ իրեքը խառնըմ իրար, արըմ, փոչի շինըմ, վախի համար: Տա, ավուկը էփըմ ենք, մը թիքա պտղեցովը էքսան փոչի ենք անըմ, խառնըմ ու տալիս վախեցածին, օքըմ աս: Շա՛տ:

<sup>1</sup> «Փըթիթա»-ն արվում է պարզվելու համար, թե հիվանդությունը որ սրբիք է ստացվել, որ համապատասխան սրբի կամ խաչի օգնությամբ բուժեն հիվանդին (ծանոթ. բանահավաքի):

<sup>2</sup> Սըրվեղ - Միջնադարյան վանք է Այգեհովիտ և Դիտավան գյուղերի միջև ընկած անտառի խորքում (ծանոթ. բանահավաքի):

<sup>3</sup> Չացուտը գտնվում է Դիտավան գյուղից վեր անտառում: Չավանաքար անվանումն ստացել է հացենի ծառի առատությամբ պատճառով: Չացուտի տարածքում վաղ ժամանակներում գյուղ է եղել, որի ավերակների հետքերը պահպանվել են: Չացուտում կա մի խաչքար և մատուռ, որը դիտավանցիների համար սրբատեղի է և որտեղ հաճախ աքաղաղ են մատաղ անում (ծանոթ. բանահավաքի):

<sup>4</sup> Յալ կամ Յալեր կոչվում է Դիտավան գյուղի դիմացի բարձրադիր լանջը (ծանոթ. բանահավաքի):

#### 46(1321). ԹԸՇՇԱՆ<sup>1</sup> (նիաթի համար)

Որ էրեխեն նիաթի ա կյալի, ճուրն ածըմ ենք ամանը ու մի իրեք-չորս հատ անձող քցըմ մեչը, ասըմ. «աչկերըտ տըրաքի, աչկերըտ տըրաքի», ում աչկերը ըրեխին կպել ա, աչկերը տըրաքի: Ու ըրեխի օրորոցի կըշտովը կամ թե չէ շորի վրովը ճուրը շաղ ենք տալի: Էտ էլ տհե ա ըլըմ:

#### Դ. ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ

#### 47(1322). ԿՅՆՐԻ ՔՅԵԼ

Վերցնում են յոթ հատիկ, վեցը՝ գարի, մեկը՝ ցորեն: Գարու հատիկներից մեկը պետք է սև լինի, իսկ մեկի կեսը՝ կտրված: Ցորենը նշանակում է բարի բախտ, սև գարին՝ վատ բախտ, իսկ կիսված գարեհատը խորհրդանշում է այն անձնավորությանը, ում համար գուշակությունը կատարվում է: Գուշակողը ձախ ձեռքի ափը փաթաթում է մի սև շորով, որի ծայրերը լավ ձգում է այնպես, որ ստացվում է հարթ ափ և այդ ձեռքով ձգում է գարու հատիկները ձախ ձեռքի ափին ու դրանց գրաված դիրքով գուշակում է: Եթե սև գարու հատիկն ընկնում է գուշակվողին խորհրդանշող գարու հատիկից հետո, ուրեմն տվյալ անձնավորության բախտը սև է, իսկ եթե ցորենի հատիկն ընկնում է գուշակվողի գարու հատիկից առաջ, ուրեմն՝ բախտը բարի է:

<sup>1</sup> Թշշան անել- փայտի այրվող, շիկացած կտորները գցում են քրի մեջ, որտեղ դրանք թշշոցով հանգչում են, այստեղից էլ՝ «թշշան անել» արտահայտությունը (ծանոթ. բանահավաքի):